

Նախագծային աշխատանք

Թեմա՝ «Պլաստիկի վերամշակում»

Տեսակը՝ հետազոտական, խմային, ուսուցողական

Դասարան՝ 9

Տևողությունը՝ 6 շաբաթ

Վերջնաժամկետ՝ 20.03

Նախագծի նպատակները՝

1. Նպաստել սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեության հմտությունների զարգացմանը:
2. Ձևավորել պլաստիկի վերամշակման արդյունավետության ուսումնասիրման կարողություններ:
3. Ուսումնասիրել Հայաստանում և աշխարհում պլաստիկի վերամշակման առաջնահերթությունը և կարևորությունը:
4. Հետազոտել և շարադրել թունավոր և ոչ թունավոր թափոնների չեզոքացման և վերամշակման կարևորությունը մոլորակը աղտոտումից և թունավորումից փրկելու համար:
5. Նպաստել սովորողների սահուն և գեղեցիկ խոսքին, խելամիտ և հիմնավորված մտքերի կառուցմանը:
6. Ձևավորել գիտելիքների և կարողությունների ճիշտ և շահավետ կիրառելու հմտություններ՝ պլաստիկի վերամշակման և անհրաժեշտ դետալներ ստանալու ընթացքում:
7. Զարգացնել կարողություն և ձևավորել գիտելիք վերամշակվող թափոնը աղբ չէ միտքը բացատրելու:
8. Խթանել սովորողների պատասխանատվությունը սեփական աշխատանքի ուսումնասիրության նկատմամբ, զարգացնել ժամանակի կառավարման հմտություններ:
9. Ձևավորել համագործակցային և սոցիալական հմտություններ:

10. Ձևավորել սովորողների մոտ ընկերների կարծիքը և ցանկությունը հաշվի առնելու պատրաստակամություն, հարգանք համադասարանցիների կատարած աշխատանքի նկատմամբ և գնահատման կարողություն:

11. Իմանալ պլաստիկի վերամշակման անհրաժեշտության, օգտակարության և շահութաբերության մասին:

12. Արտահայտել սեփական կարծիքը շրջապատը թափոններից մաքրելու, պատրաստի հումքը օգտագործելու, արտադրանքից շահույթ ստանալու մասին:

Նախագծի վերջնարդյունքները՝

1. Վերամշակել պլաստիկը և ստանալ անհրաժեշտ դետալներ:

2. Վերջնական տեսքի բերել կատարած աշխատանքները՝ նկարել տեսահոլովակ, նկարներ և պատրաստել սահիկաշար:

Ժամկետը 5 շաբաթ:

3. Ինքնուրույն, սահուն և գրագետ ներկայացնի աշխատանքը՝ թափոններից ազավելու և վերամշակելու անհրաժեշտությունն ու կարևորությունը:

4. Նախագծի բնույթից կախված ապահովի միջառարկայական կապերը, (կենսաբանություն, էկոլոգիա, աշխարհագրություն) կատարի եզրահանգումներ:

5. Ցուցաբերի արդյունավետ ինքնուրույնություն:

6. Ցուցաբերի պատասխանատվություն թիմային աշխատանքում:

7. Դրսևորի համագործակցային հմտություններ:

8. Իմանա պլաստիկին երկրորդ կյանք տալու և շրջապատը մաքուր պահելու անհրաժեշտության մասին: Սեփական վարքագծով և ձեռք բերած գիտելիքով իրազեկի շրջապատին թափոնների ճիշտ խմբավորման կարևորության և վերամշակման օգտակարության մասին:

Իրականացման փուլերը՝

1. Նախապատրաստել նաղագծին՝ կազմել խմբեր, ընտրել ղեկավար:

2. Խմբերը ընտրեցին իրենց աշխատանքը:

3. Ներկայացնեն կատարած աշխատանքները, ձևակերպեն իրենց մտքերը, դժվարություններն ու հաջողությունները: Իրականացնեն փորձերը վերամշակման, նկարեն հարցազրույց՝ հավաքագրեն մարդկանց կարծիքներ:

4. Կատարեն վերլուծություն, նախապատրաստեն անհրաժեշտ պարագաները նախագծի ներկայացման համար, կատարեն առաջարկություններ, քննարկեն արդյունավետությունը:

5. Խումբը ներկայացնի աշխատանքները, կատարի եզրահանգումներ:

Գնահատում

1-ին փուլ- Խմբի կազմակերպչական կարողություններ:

2-րդ փուլ- Առաջադրանքը ընկալելու, գրառելու, խմբում միասնական քննարկում կազմակերպելու, միմյանց լսելու կարողություններ:

3-րդ փուլ- Տվյալների հավաքման , կազմելու, գրանցելու, մտքերի փոխանակման և ներկայացման կարողություն խմբում:

4-րդ- Տեսահոլովակի, սահիկաշարի և հստակ ու համոզիչ խոսելու կարողություններ: Սեփական մտքերի արտահայտում:

Նախագիծը կատարող աշակերտներ

1. Զաքարյան Մարի
2. Հակոբյան Հայարփի
3. Խարլամպևա Հասմիկ
4. Փարսյան Էդմոնդ
5. Ստեփանյան Նարեկ
6. Ավալյան Վահրամ
7. Փաշայան Նարե
8. Հայրապետյան Հասմիկ
9. Վանեսյան Գառնիկ
10. Հարությունյան Արեն
11. Թուխիկյան Էդմոնդ

Ուսուցչի գործողությունները

- Ներկայացնել նախագիծը, աշխատանքի էությունը , փուլերը: Հանձնարարել ձևավորել խմբեր:
- Տրված հանձնարարությունից իրենք ընտրում են իրենց աշխատանքը:
- Հանդիպել շաբաթը մեկ անգամ, քննարկել աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում հուշում կատարել և ուղղորդել:

- Հանձնարարել վերջին տեսքի բերել հավաքած տվյալները, նկարները, սահիկաշարը:
- Օժանդակել աշակերտներին դպրոցում առկա միջոցներով և նյութերով:
 - Ներկայացնել նախագիծը:

Աշակերտի գործողությունները

- Թիմը ծանոթանում է իրականացվելիք աշխատանքներին: Ընտրում է ավագ՝ աշխատանքները կազմակերպելու համար: Յուրաքանչյուրը ընտրում է իր աշխատանքը՝ կարողություններին համապատասխան:
- Թիմի անդամը ներկայացնում է կատարած աշխատանքը: Դժվարություններն ու հաջողությունները քննարկում են խմբում և պլանավորում հետագա աշխատանքները:
- Կիրառելով անվտանգության կանոնները, թիմը ստանում է դետալներ, անդամները փոխանակում են մտքեր, քննարկում դժվարությունները:
- Թիմը կատարում է վերլուծություն, ընդհանրացնում է աշխատանքը և ընտրում ներկայացման ձևը:

Օրերը / Գործողությունները

- Տարբեր աղբյուրներից հավաքագրել նյութեր, գիտական փաստեր:
- Ծանոթացնել պլաստիկի վերամշակման եղանակներին, ընտրել արդյունավետ տարբերակը:
- Լաբորատոր պայմաններում դետալների ստացում (փորձ):
- Վերջնական տեսքի բերել կատարած աշխատանքները:
- Ներկայացնել նախագգծային աշխատանքը տեսահոլովակի ձևով:
- Խումբը ներկայացնի աշխատանքները, կկատարի եզրահանգումներ: